## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար կենցաղային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/30» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«23» հուլիսի, 2018թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Ավետիք Ավագյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳՀՂ) ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Հովհաննես Ստեփանյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Արմինե Ալիխանյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայրի պատասխանատու,

**Լիլիթ Հովհաննիսյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Օֆելյա Աստոյան՝** (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Սհմ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

Նիստից բացակայում էր՝

**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

1. **Տեղեկություն՝ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/30» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.**

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 2018թ.-ի հուլիսի 23-ին, ժամը 12:00-ին:

**2. Տեղեկություն՝ գնման առարկաների ընդհանուր գնի վերաբերյալ.**

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գները՝ մեկ թվով արտահայտված.

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | Գնման հայտով սահմանված գինը՝ մեկ թվով արտահայտված /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1 | *Օդորակիչներ* | **500 000** |
| 2 | *Օդորակիչներ* | **220 000** |
| 3 | *Կենցաղային սառնարաններ* | **3 300 000** |

| | | |
|---|---|---|
| 4 | Հեռուսփացույցներ | 1 452 000 |
| 5 | Ջրի զփման սարքավորումներ | 201 000 |

3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| Մասնակցի անվանումը (անունը) | Էլեկտրոնային փոստի հասցեն |
|---|---|
| «Զիգզագ» ՍՊԸ | grigor.avagyan@zigzag.am |
| «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | ReForceGroupLLC@gmail.com |
| «Մարինե-99» ՍՊԸ | maarine90@rambler.ru |

**4. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

«Զիգզագ», «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» և «Մարինե-99» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**5. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

«Զիգզագ», «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» և «Մարինե-99» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

6. **Մասնակիցների առաջարկած գները՝**

| Չ/Հ | Ապրանքի անվանումը | Գնային առաջարկները (ՀՀ դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | | |
| | | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 3 | Կենցաղային սառնարաններ | 2 959 000 | | 2 959 000 |

| Չ/Հ | Ապրանքի անվանումը | Գնային առաջարկները (ՀՀ դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | «Մարինե-99» ՍՊԸ | | |
| | | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 3 | Կենցաղային սառնարաններ | 3 168 000 | | 3 168 000 |

| Չ/Հ | Ապրանքի անվանումը | Գնային առաջարկները (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| | | «Զիգզագ» ՍՊԸ |

| | | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 4 | ***Հեռուստացույցներ*** | 1 512 916,67 | 302 583,33 | 1 815 500 |
| 5 | ***Ջրի զտման սարքավորումներ*** | 170 275 | 34 055 | 204 330 |

Հանձնաժողովը որոշեց.

7. Ընթացակարգի 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտ ներկայացրած մասնակցի գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման հայտով սահմանված գինը, ինչով պայմանավորված անհրաժեշտություն է առաջանում առաջարկված գների նվազեցման նպատակով «Զիգզագ» ՍՊԸ-ի հետ վարելու բանակցություններ՝ Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

Հանձնաժողովը որոշեց.

-ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն (ոչ մի հայտ չի ներկայացվել):

-հաստատել «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/30» ծածկագրով ընթացակարգը 1-ին և 2-րդ չափաբաժինները չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

-նիստը կասեցնել, և բանակցություններ վարելու նպատակով հաջորդ նիստը հրավիրել 2018թ. հուլիսի 27-ին՝ ժամը 11:00-ին, «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի վարչական շենքում (ք. Երևան, Վ. Սարգսյան 5):

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

***Գնահատող հանձնաժողովի նախագահ՝***

Ա. Ավագյան

(ստորագրություն)

***Հանձնաժողովի անդամներ՝***

Հ. Ստեփանյան

(ստորագրություն)

Ա. Ալիխանյան

(ստորագրություն)

Լ. Հովհաննիսյան

(ստորագրություն)

***Գնումները համակարգող՝***

Օ. Անատրյան

(ստորագրություն)